ԱՐԱՄ ՎՐՈՒՅՐԻ «ՋՈՒՂԱ» ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՏԻՊ ԱԿՆԱՐԿԸ

Հայ բեմի ականավոր կատակերգակ Արամ Վրույրը լավագույն մասնագետ էր նաև հնագիտական-ճարտարապետական-լուսանկարչական արվեստի։ Ժամանակի հայ իրականության մեջ նա բացառիկ դեմքերից մեկն էր, որ իր հռանդն ու կարողությունը ի սպաս դրեց նաև մեր պատմական արվեստին և գիտություններ։

Երբ 1892 թ. Ն. Մառը ոտք դրեց Անի, Արամ Վրույրն արդեն այնտեղ էր։ Անիում հաստատված նրանց աշխատանքային կապը խզվեց 1917 թ., երբ Անին դարձավ անմատչելի մեր հնագիտության համար։ Արամ Վրույրը Ս. Պետերբուրգի Հնագիտական ընկերության անդամ էր։

Իր կողմից խմբագրած և հրատարակած «Հուշարար» երկշաբաթաթերթում Ա. Վրույրը տպել է մի շարք հնագիտական հոդվածներ՝ «Պեղումները Անիում», «Պարսկական բանաստեղծությունը Անիի պարիսպների վրա» և ուրիշներ։

1916 թ. նա գիտությունների ակադեմիայի կողմից և Մառի ղեկավարությամբ Տաճկահայաստանում աշխատող գիտարշավի անդամ էր։

Բացի Անիի աշխատանքներից Արամ Վրույրը Մառի հանձնարարությամբ, որպես հնագետ-լուսանկարիչ, գործուղվել է Հաղբատ-Սանահին, Թալին, Խոշավանք, Արգինա, Հին Ջուղա և այլուր ու կատարել գդալի աշխատանքներ։

Արամ Վրույրի լուսապակիների մեծ ժողովածուն 1909 թ. փոխադրվեց Պոլիս հրատարակության նպատակով, բայց նյութական արգելքները, այնուհետև պատերազմն ու եղեռնը պատճառ դարձան դրանց անհետացման։ Այդ ժողովածուի կովկասում մնացած մասը գտնվում է իր որդու՝ Արտաշես Վրույրի մոտ, որի մեջ է նաև Հին Ջուղայի մասը, բաղկացած 115 ապակուց։

«Ջուղա» խորագրով հոդվածը, որ հրապարակվում է, Ա. Վրույրի անտիպ աշխատություններից է, գրված 1915 թ.։

ԱՐՏԱՇԵՍ ՎՐՈՒՅՐ

Ջ Ո Ւ Ղ Ա

Երկու խոսք

ԱՐԱՄ ՎԲՈՒՅՐ

Ես շատ էի ցանկանում, որ Ջուղայի մասին ընդհանրապես և նրա խաչքարերի մասին մասնավորապես ավելի ձեռնհաս անձն հանձն առներ գրել մի ամփոփ տեսություն, բայց հակառակ իմ արած դիմումներին մինչ օրս այդպիսի մի գործի ոչ ոք չձեռնարկեց, իսկ ինձ համար շատ ցանկալի էր, որ մի ժամանակ իր հարստությամբ անչափ հռչակ հանած այդ «քաղաքը», ինչպես հորջորջում են իրենք, ջուղայեցիք, չմնար մեն մենակ, իր բազմաթիվ գեղաքանդակ խաչքարերով, այլ գրի առնվեին այն հատուկտոր ավանդությունները, որ ցրված են տեղացվոց մեջ, որոնք դարեր հոլովվելով կորել-նվազել, և հազիվ մի քանի առասպելանման անցքեր պատմվում են մեր օրերը։

Ջուղայեցիք աչքի ընկնող տեղ են գրավում XVI—XVII դարերի մեր ազգային պատմության մեջ, նախ իբր ջերմ ուսումնասեր մարդիկ, որոնք իրենց առատ ոսկով հայ տպագրական գործի ռահվիրաներ են հանդիսացել, և իբր արևելքի բոլոր երկրների անխոնջ ու անվախ ճանապարհորդներ. միևնույն ժամանակ եղել են և այդ հրատարակությունների ամեն կողմ ցրված հայության մեջ տարածողները։ Նրանք էին Պարսկական ծոցում (Բասրա) բուն դրած Հարպիկ վաճառականները, որոնք հիմք դրին և անչափ ճոխացրին ու զարգացրին Հնդկաստանի և Արևմուտքի միջև առևտրական հարաբերությունը։

Նրանց առևտրական տները տարածված էին բացի Հնդկաստանի մի քանի գլխավոր կենտրոններից նաև Բաղդատ, Ռաշտ և Էնզելի, Աստրախան, Մոսկվա, Ամստերդամ, Ճավա կղզին, Վենետիկ, Կ. Պոլիս, իսկ մյուս կողմից մինչև Չինաստան։

Իրենց գլխավոր գաղթավայրերում, մասնավորաբար Ն. Ջուղա, Մադրաս և Կալկաթա՝ հաստատում էին իրենց տպագրական մամուլը, որի ունեցած և ունենալիք ահագին նշանակությունը, իբր գործի մարդիկ, քաջ էին ըմբռնել։

Ջուղայեցիների ձեռք բերած անբավ հարստության պետք է վերագրել և այն վերացական, հանդուգն մտածումներն ու ծրագիրը՝ «անկախ Հայաստան» ստեղծելու գաղափարը, այն էլ XVIII դարում, որը անշուշտ համարում էին հնարավոր, առանց ոտքի տակ մի ամուր գետին ունենալու, լոկ ամենազոր ոսկու ուժով (տե՛ս «Որոգայթ փառաց»)։

Այսպես, XV դարից հազիվ հրապարակ եկած ջուղայեցիք XVI, XVII դարերում հանկարծ քայլեցին հայկական հորիզոնում արտակարգ ցոլմունքով. ու իրենց փարթամության, հարստության գագաթնակետին հասան և ապա ասուպի նման անհետացան։

Աստիճանաբար խոնարհեցավ նրանց փառքի արեգակը նաև Նոր Ջուղայում, թողնելով իբր անցյալ հարստության կոթող մի շատ փառավոր վանք ու մի շարք փարթամ ու պալատանման տներ, և այնպես, ինչպես իրենց նախ-

կին բնակավայր Հ. Ջուղայում, թողին հաղարավոր դեղաբանդակ կոթողխաչքարեր։

Մեր ձեռքի տակ ունեցած բոլոր փաստերից հաստատապես կարելի է եզրակացնել, որ ինչպես ժամանակի պահանջած կրթության, այնպես էլ արվեստի նաշակը զարդացած է եղել Հայաստանի այդ խուլ անկյունում, որի ապացույցները տվին նրանք իրենց նոր հայրենիքում, որտեղից դուրս եկավ նաև Պարսկաստանում այն ժամանակի նշանավոր նկարիչ Մինասը[1]։

ՀԻՆ ՋՈՒՂԱ

Նրա անցյալից ու ներկայից (Լուսանկարչի հուշեր)

Ակադեմիկոս Մառը երբ որոշեց իր Անիի պեղումների սահմանները ընդարձակել և կազմեց Անիի ինստիտուտի լայն ծրագիրը, որոշեց այն դարձնել Հայկական աշխարհի հնախոսական-գիտական աշխատանքների կենտրոնավայր։ Այդ օրվանից էլ աշխատանքները հետզհետե ընդարձակվեցին դեպի Գառնի, Դվին, դեպի Վիշապաղունների սահմանները (Աժդահայուրտի), Թալին, Հաղբատ-Սանահին, Վան և այլն։ Սորանցից մեկի՝ Հին Ջուղայի, գլխավորաբար նրա գերեզմանատեղի և տեղացիների մեջ այդ տեղահանված գյուղաքաղաքի մասին մնացած ավանդությունները հավաքելն ու հիշատակարանների լուսանկարելը ինձ հանձնվեց։ Եվ ես Անիի ամառնային լուսանկարչական աշխատանքները ավարտելուց հետո 1915 թ. սեպտեմբեր ամսի սկզբները իմ Արա որդու հետ ուղևորվեցի դեպի Ջուլֆա երկաթուղու կայարանը և այնտեղից մոտ չորս վերստ հեռուն գտնվող Հին Ջուղա գյուղը, որ համանուն ավերակ գյուղաքաղաքից գտնվում է քիչ հեռու, նրա արևելյան կողմը։

Իմ ուղևորության պաշտոնական հանգամանքը և նրանից բխած պաշտոնաթղթերը ամեն դյուրություն ընծայեցին և գյուղի ստարշինայի (ավագ) օգնականը առանց երկար-բարակ մտածելու իր մաքուր հյուրասենյակը, կից նախասենյակով, դրեց իմ տրամադրության տակ, որի փոխարեն ես էլ նրան միամտացրի, թե մի ինքնակոչ հյուր չեմ լինելու նրա տանը և թե իմ բոլոր կարիքը փողով պետք է վճարեմ։ Այս կետը նրան ակներև բավականություն պատճառեց։ Նախասենյակը իսկույն վերածեցի լուսանկարչական մութ սենյակի, և հաջորդ առավոտ այցելելով գյուղաքաղաքի ավերակներն ու գերեզմանատեղը՝ կազմեցի իմ աշխատանքի ծրագիրը, ինձ հետ ունենալով գյուղի մի ինտելիգենտ՝ ուսանող Տուրդեն Աղամալյան, որ սերում էր բնիկ հին ջու-

---

1 Նկարիչներ «վարպետ Հակորջան» և Մինաս շատ նշանավոր են հանդիսացած։ Պատմագիրը առաջնու միայն անունն է հիշում, իսկ մյուսի մասին պատմում է շատ մանրամասնություններ։ Մինասը իր արվեստը կատարելագործել է Հալեպում մի «ֆրանկիս» մոտ (շատ հավանական է իտալացի) և ապա վերադառնալով Ն. Ջուղա, սկսել նկարչությամբ և գլխավորաբար տեղվույն խոջաների տները նկարազարդելով պարապել. որոնցից մեկի, խոջա Սաֆրազի մոտ Շահսեֆի արքան տեսնելով նրա արտակարգ տաղանդը, անվանել է Մինաւին պալատական նկարիչ։ Նրա արվեստի գլխավոր առանձնահատկությունն էր մարմնի զանազան անգամների համաչափությունը, որից զուրկ էին ժամանակի նույնիսկ նշանավոր համարված պարսիկ նկարիչները։ «Նոր Ջուղայեցվոց պատմության» մեջ ես հիշվում են վարդապետներ, որոնք նկարներով զարդարել են Ամենափրկչի վանքը (տե՛ս Պատմութիւն Առաքելի վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, գլ. ԻԹ, էջ 409)։

ղայեզիներից, որի նախնիքը տեղահանության ժամանակ փախել-թաքնվել էին և ապա կրկին վերադարձել։

Հին Ջուղայում, ինչպես երևում է, քարուկիր և հիմնավոր շինություններ եղել են շատ սակավ, որովհետև տեղահանությունից հետո որքան որ հրդեհի է մատնվել Ջուղան, այնուամենայնիվ քար ու կրով շինվածքների մասերն ու պատերը որոշ չափով կմնային, մինչդեռ այստեղ ամեն ինչ համարյա հողի է հավասարած, ի բաց առյալ մի հնօրյա քարվանսարա և գյուղաքաղաքը ղերեզմանատնից բաժանող մի ողորմելի պարսպի մնացորդ։ Ես երկար տարիներ բնակվել էի Անիում, շնչել նրա օդը, սովորել շարունակ տեսնել նրա հսկա ու աննման կոթողները, որոնք դարերի ընթացքում մաքառել էին մարդկային ու տարերային քայքայիչ բռնություններին, և այնուամենայնիվ մեզ, քսաներորդ դարու մարդկանս զարմացքի ու հիացմունքի առարկան դառնալու չափ անաղարտ մնացել։ Եվ ես, որ շատ էի կարդացել մեծափարթամ խոջաների, նրանց հարստության ու ճոխության մասին, կամենում էի նրանցից մնացած հարտարապետական-գեղարվեստական մի շքեղ կառուցվածքի գեթ ստվեր գտնել. բայց զուր, ամեն ինչ բովանդակված է գերեզմանատանը, նրանց խաչքարերի վրա և ուրիշ ոչ մի տեղ. ես գիտեմ, Շահ Աբասի նման բռնավորը Ջուղան հրդեհի մատնելով աշխատում էր նրա հետքն ընդամ ջնջել և եթե լինեին իսկ խոշոր կառուցվածքներ, պիտի ջանար նրանց էլ հիմնահատակ կործանել, բայց այդպիսի շենքեր մինչև իրենց հիմունքը կործանվելով, սպառ-սպառ անհետ չեն կորչում երկրի երեսից, օրինակ, Զվարթնոց եկեղեցին մոտ 1000 տարի ավերակ մնում է Վաղարշապատում, և նրա չափով ու ձևով Անիում շինված Ս. Գրիգորը, որ 800 տարի է ինչ կործանած է, բայց այնուամենայնիվ նրանց վլատակների բլուրները լեռնացած մնում են, շնայելով նրանցից տարված մեծաքանակ սրբատաշ քարերին։ Թեպետ և սա ևս պետք է խոստովանել, որ Ջուղայի թե՛ գերեզմանատան մեծ մասի և թե՛ գյուղատեղի մնացորդների քանդման ու ոչնչացման գործին մեծապես նպաստել են երկաթուղու կառուցողները։ Անխիղճ, կրթված ինժեներների ու տգետ կապալառուների ձեռքով հուշարձանները գործածվել են իբր քարհանք, և կես վերստաչափ տեղ գրավող երկաթուղու գծի տակի ձորը բարձրացնելու համար օգտագործել են խաչքարեր ու այլ հուշարձաններ։ Տեսնելով, որ ջարդված ու ամբողջ, իբր հասարակ քար կամ խիճ գործածված են XV, XVI դարերի քանդակագործության ընտիր նմուշներ, մարդ չի իմանում, թե ինչ անուն տա այդ վանդալականությանը։ Բանը այնտեղ է հասել, որ Հին Ջուղայի մի գյուղացի, Սահակ Աբրահամյան անունով, տեսնելով կատարվող այդ անխիղճ բարբարոսությունը, վրդովվել է մինչև սրտի խորքը և օրական 80 կ. մշակներին վճարելով, իր հերթին սկսել է գերեզմանաքարերը ածել Արաքսը և մի մասն էլ փոխադրել գյուղի՝ իրենց բնակավայրի մոտ, որ գոնե այդպիսով թանկագին հիշատակարաններից մի մասը փրկվի։ Այդ քարերը մինչ օրս էլ մնում են իրենց եղած տեղերում։ Մինչդեռ այդ գերեզմանատունը, իր ընդարձակությամբ և ճոխությամբ միակը Կովկասում, մի ճշմարիտ հնագիտական թանգարան է, որը, ես կարծում եմ, ամենայն խնամքով պետք է պահպաներ ժամանակի ռուս կառավարությունը։

---

2 Կարսում, փոքր կլոր գմբեթավոր հայկական հին եկեղեցու մոտերքը մինչև վերջին ժամանակները բնկած մնում էին Գագկաշեն Ս. Գրիգորի վիթխարի խոյակներից երկուսը։

Ջուղայի կործանված կամուրջը և քարվանսարաները ապացույց են, որ նա Անիի ծաղկած ժամանակ դեպի Պարսկաստան գնացող ու վերադարձող կարավանների գլխավոր կայաններից մեկն է եղել։ Բայց չկա ճոխության, հարստության և ոչ մի հետք։ Անցյալի անբարբառ, բայց պերճախոս վկաներն են Ջուղայի խաչքարերը։ XVI դարու կիսից առաջ Ջուղայի թե՛ խաչքարերը և թե՛ այլ տապանաքարերը շատ հասարակ բաներ են, պարզ քանդակներ, հասարակ քարեր, էլ չեմ խոսում պատկերների բացակայության մասին։ Մի խոսքով շատ հասարակ գերեզմանաքարեր, որոնց նմաններով լի է Հայոց աշխարհը։ Բայց քանի թվականը մոտենում է XVI դարու կիսին, վերջերին և XVII դ. սկզբներին՝ ճոխությունն ու վարթամությունը ակնհայտնի աչքի են ընկնում։ Ջուղայեցվոց մեջ կարծես մի տեսակ մրցում է երևում ճոխ ու նկարեն խաչքարերով միմյանց գերազանցելու։ Նույնը կարծես նկատվում է ազգի տպագրական-կուլտուրական գործում նրանց ցույց տված եռանդի ու ջանքերի մեջ։

Այդպիսով տեսնում ենք, որ մասամբ ստուգվում է տեղացվոց մեջ ցայժմ մնացած այն ավանդությունը, որ Անին ամայանալուց հետո (XV դար) սկսվեց Ջուղայի ճոխանալը[3]։

Բայց անցնենք գյուղի սրևմտյան կողմը, դուրս գանք ներկա գյուղը հնից բաժանող կիրճից, և բռնելով երկաթուղու գիծը՝ հին գյուղատեղի ավերակների միջով դիմենք ուղղակի դեպի գերեզմանատունը։

Գյուղատեղը գերեզմանատնից բաժանված է խարխլած պարսպով, որ իր դիտարի օրերումն էլ մի խեղճ բան է եղել, և ուր այժմ տիրում է լռություն սրտաճմլիկ ու աղիտաշոր այն ողբ ու կոծից, վայնասունից, հուսահատեցուցիչ այն աղաղակներից ու հեծեծանքներից հետո, որ վերջին անգամ պիտի արձագանքեին Ջուղան շրջապատող լեռներն ու բլուրները։ Անցնելով այդ սարսռազդեցիկ մեռելային խաղաղության այն զարհուրելի տեղից, մտնում ենք «մեռելոց» աշխարհը. մեռած գյուղատեղ, մեռած՝ նրանից դեպ հարավ գտնվող հին քարվանսարան, մեռած Արաքսը, որ այդ ափերի մոտով անցնում է լռիկ, անշշունջ, մեռած ամբողջ բնությունը։ Եթե չլիներ երկաթուղու գծի պահապանի տնակը, և նրանից էլ քիչ հեռու սահմանապահ զինվորների զորակայանը, պիտի կարծվի, որ այդտեղ ոչ մի շնչավոր գոյություն չունի։

Ահա և մեռելաստանը։ Տեսարանը որքա՜ն խորհրդավոր է այդ խորին քարացած լռության մեջ։ Մի քանի դարեր կյանք ունեցող հաղարավոր կճյա ուրվականներ, շարքերով կանգնած, կարծես պատրաստված են արշավանք գործելու. ճակատամարտը արդեն տեղի է ունեցել կարծես, որովհետև այդ հսկաներից որքաննե՜ր աջ ու ձախ ընկած են անկարգ։ Նրանց շարքերը երկար ձգվում են, շա՜տ երկար։

Ջուղայի գերեզմանատեղը բաղկացած է իրարից անջատ երեք բլրակներից (տե՛ս մեր պատկերները)։ Առաջ անցնենք բլրակներից և դառնանք դեպի արևելք, մանավանդ երբ միջօրեից քիչ անց է ժամանակը և այդ անբարբառ բազմության արևմտյան երեսները բավականաչափ լուսավորված են արևի հառագայթներով։ Լույսն ու ստվերը մի ակնախտեղ պատկեր են բաց անում

3 Տեղացիք մի շատ միամիտ բացատրություն են տալիս իրենց գյուղի անվան ծագման մասին, իբր երբ Անին սկսել է ավերվել և Ջուղան ճոխանալ, սա համարվել է նրա մի մասը կամ ճյուղը, այսինքն «ճյուղա»—Ջուղա։

ձեր առաջ. այդ հազարավոր քարերը ճոխապես քանդակված, կարծես ամենանուրբ ասեղնագործ հանդերձանքով զգեստավորված՝ իրենց դյութական կերպարանքը ձեզ են դարձրած։ Ի՞նչ հակապատկեր. ո՞ւր մնացին քիչ առաջվա տխուր ու միօրինակ, տափակ, քարյա կոթողները... նրանց փոխարինեցին բաց մանուշակա-վարդագույն քարեր՝ ոտքից գլուխ պճնազարդ, և այդ զարդաքանդակների գլխավոր առարկան կազմում են խաչերը զանազան ձևերով, զանազան չափերով, զանազան հյուսվածքներով։

— «սր խաչս բարեխօս առ քս...»

— «սր խաչս յշտկ է առ քս փրկութ... հոգս...»

Եվ այսպես հազարավորներ։

Շատ եմ տեսել խաչքարեր և առհասարակ նրանց կազմության քաջածանոթ եմ. երբ նրանց արևմտյան կողմը բաց է լինում, այսինքն հենված չէ լինում որևէ պատի, այդ մասը սովորաբար արձանագրություն է ունենում. իսկ արևմտյան երեսի վրա՝ քանդակազարդ խաչը; այդպես է մանավանդ ձորագետցիների խաչքարերի մեծամասնությունը։ Բայց ջուղայեցիք ունեցել են իրենց սեփական ոճը, ջուղայականը, եթե կարելի է այսպես ասել, չենթարկվելով հայկական խաչքարերի ավանդական ձևերին։ Այստեղ քարի արևմտյան ճակատի վրա քանդակված է ոչ միայն խաչը, նրան շրջափակող ճոխ հյուսվածքով շրջանակը և արձանագրությունը, այլև շատ հաճախ՝ հանգուցյալի սպառազեն ձիավոր պատկերը։ Այլ տեղերում սակավ հանդիպող խաչքարերի այս ոճը իր զարգացումն է ապրել Ջուղայում և այդտեղ էլ մնացել՝ հարավից, հյուսիսից, արևմուտքից պարսպաձև վարդագույն ժայռերով շրջափակված որոնց միջից Արաքսն է հոսում հեզասահ՝ այդտեղից շեշտակի դիմելով դեպ արևելք։

Բայց այս արվեստը այն չէ, որին անվանում ենք հայկական ոճ, որի իբրև ընտիր օրինակներ կարող ենք ցույց տալ Բարսեղ եպիսկ. խաչքարը Անիում, Առաքելոց եկ. արևմտյան կողմը, որ պեղումներից գտնվեց ջարդ ու փշուր, որը նորոգել տվեց և իր պատվանդանի վրա կանգնեցրեց ակադեմիկոս Մառը. Սանահնում Գրիգոր եպս. Տուտեվորդու խաչքարը, որ մի ամենակատարյալ նմուշ է հայ արվեստի (XIII դար), Սարգսի խաչքարը նույն տեղում և ուրիշներ. սրանց կազմիչները ուրիշ ոգով են ոգևորվել, և իրենց կերտվածքին մի այնպիսի շունչ փչել, որը հավիտյան պիտի բարբառի թե ինքը մի պատվավոր ներկայացուցիչ է հայ արվեստի։ Բայց այստեղ, Ջուղայում չի զգացվում այդ ոգին, այդ շունչը. այստեղ քանդակները ճոխ են, հարուստ, կազմողների երևակայությունը ստեղծել է շատ բան, բայց ոչ նման միջնադարյան հայկականին այլ մեծապես ազդված պարսկականից։

Այստեղ, այս գավառում աղճատվեց հայ լեզուն ունիթորների ձեռքով XVI դարում, և հենց այդ միևնույն գավառում, լեզվի աղճատման այդ շրջանին վիճակվեց նաև հայ արվեստի անկումը և այդ անկման մեջ նա հասավ ուրույն կատարելագործության գագաթնակետին, որ մինչ այդ բոլորովին խորթ էր հայ արվեստի մեջ, և մի ձեռքով բռնելով այդ նոր արվեստը և այն զարգացնելով, մյուսը մեկնեցին մինչև նախահայկական, հեթիթական ու ասուրական մարդադեմ ու ցուլամարմին աստվածությունները։

Հին Ջուղայի գերեզմանոցի առանձնահատկություններից մեկն էլ է անշուշտ իր խաչքարերի հետ խառն, մեջ ընդ մեջ ընկած քանդակազարդ ու պատ-

կերազարդ խոյերը։ Քանդակված են գլխավորաբար նրանց կոնակը, կողերը և կոտոշները։ Նրանք մեծ մասամբ թավալգլոր ընկած են անկարգ, ընդհանրապես ջարդված, որոնց բոլորի մոտալուտ կորուստը գուշակելով լուսանկարեցի համարյա ինչ որ կար։ Շատ հետաքրքիր են նրանց վրա քանդակված պատկերներն ու արձանագրությունները։ Նրանց վրա քիչ են երևում ձիավորված նկարներ, այլ բոլորը գրաղված են քեֆով. նվագածությամբ (սաղ կամ թառ) և ուտել-խմելով. հիշտ հակապատկերը խաչքարերի։ Նստած են պարտեզում ծալապատիկ, իսկ նվագածուն ու մատռվակը՝ ծնկաչոք։ Հիշատակարաններն էլ շատ միօրինակ են.

— «Այս է հանգիստ Աղուալոյն, պայծառ դոյնով նման վարդոյն. թվ. ՌԻ։(1571)։

— «(սբ) խաչս[4] բարեխօս առ քս. մանուկ[5] յովհաննիսին, յոյժ սիրահար իւր ծնօղին. թվ. Ռ։Ը»։

Որպեսզի հնար լիներ լուսանկարել պետք եղավ ընկածները ոտքի կանգնեցնել, իհարկե միայն նրանք, որոնց ուղղելու կամ կանգնեցնելու հնարավորություն կար։ Այդ աշխատանքին մասամբ ինձ օգնում էին հայ ու վրացի սահմանապահ զինվորները՝ իրենց հրամանատարի թույլտվությամբ։ Բայց այդ բոլորի մեջ կա մի հսկա, խոշորադույն խոյ, հսկա՝ իր ծավալով ու մեծությամբ, որ տապալած է, իսկ իր կանգնած տեղը փորփրած։ Իր մեծության պատճառով, որ միակն է ամբողջ գերեզմանատանը, կարելի է նրան անվանել «խոյերի թագավոր»։ Բարեբախտաբար այդ հսկան չէ ջարդված։ Նրա երկարությունն է 1,97 սմ, բարձրությունը՝ 1,16 սմ, վզի շրջապատը՝ 1,44 սմ։ Մնացյալ մեծագույն խոյերի չափերն են. երկարությունները՝ 1,29 սմ—1,05—95 և այլն։

Շատ հետաքրքրվեցի խոյերի այս ջարդ ու փշուր լինելու, ահագին աշխատանքով նրանց թավալգլոր անելու և իրենց տակի հողն էլ փորփրելու պատճառների մասին, որին այժմյան Ջուղայի ալևոր գյուղացիք հետևյալ բացատրությունը տվին։

Սրանից քանի տարիներ առաջ Նոր Ջուղայից գալիս է մեկը՝ Հին Ջուղայից գաղթողների սերնդից, և պատմում, որ իր նախնիքը գաղթելիս, գերեզմանատանը գտնվող խոյերից մեկը դմակի կողմից ծակել են և փորի մեջը ոսկի են թաքցրել, իսկ դմակի վրայի ծակը խիցիով փակել։ Եկողը շատ է փնտրում մի նման ծակած պոչով խոյ, բայց չգտնելով՝ հուսահատ վերադառնում է։ Ահա այսպիսի մի պատմություն բավական էր, որ հին ջուղայեցիք շարունա-

---

4 Խոյերի վրա էլ, մի եզերքում, լինում են խաչաքանդակներ։

5 Մանուկ կամ Պայծառ մանուկ, որ ստեպ կրկնվում է Հ. Ջուղայի խոյերի և խիստ սակավ էլ ուրիշ արձանագրությունների մեջ, կարծում եմ ծաղկահասակ, երիտասարդ, գուցե և նորափեսա մտքով գործածված լինի։ Դրա մի հետաքրքիր բացատրությունն է Պարտիզակի (Կ. Պոլսո մոտ) բաբբառով ժողովրդ.-հարսանեկան երգի խոսքերը։

Ասեք շնորհավոր, տեսեք շնորհավոր
Այս թագավորին, այս նոր մանուկին
Հանեցին հիներ, հագուցին նորեր,
Այս թագավորին, այս նոր մանուկին։ (Մ. Գ ա ս պ ա ր յ ա ն. Հայերը Նիկոմիդիո գավառին մեջ, էջ 297)։

կեին և կատարելագործեին հիշյալ եկվորի սկսածը, ոչ միայն խոյերը փշրելով ու շուռ ու մուռ տալով, այլև նրանց տակի հողն էլ փորփրելով[6]։ Անվնաս մնացել են գլխավորաբար նրանք, որոնք փոքր են չափով և աննշան, իսկ մեծությամբ ու նկարներով աչքի ընկնողները համարյա բոլորը ջարդված են։ Թեև սա ևս պետք է հիշել, որ խոյերի քանդակման դյուրության համար վարպետներն ընտրել են ավելի փուխր քար, որոնք տարերքի ազդեցության տակ մասամբ կարծես հալվել, փոշիացել են։ Մեր մի քանի նկարների վրա այդ պարզ նշմարվում է։

Իմ առաջին այցելության ժամանակ գերեզմանատան մեջ արդեն որոշեցի այն գլխավոր սյուժեները, որոնք ներկայացուցիչ կարող էին համարվել մի շարք իրենց նման խաչքարերի։ Նշանակեցի յուրաքանչյուրի որ բլուրի վրա գտնվելը և այլն, այնպես որ նրանից հետո երկար պրպտումներ չէին հարկավոր նշանավորագույնները գտնել-նկարելու համար։ Այդ բանում ինձ շատ աջակցություն ցույց տվեց ուսանող Բուրդեն Աղամալյանը, որին ծանոթ էր գերեզմանատան համարյա յուրաքանչյուր աչքի ընկնող քարն ու անկյունը, և ինձանից առաջ էլ մի շարք ճանապարհորդ այցելուների առաջնորդ էր եղել և նրանց ընկերակցել։

Ընթերցող, այժմ ինձ հետ միասին այցի գնանք գերեզմանատուն, մտնենք խաչքարերի լաբիրինթոսի մեջ, մոտից քննենք նրանցից գոնե մի քանի նշանավորագույնները, և միասին ճաշակենք այդ հեռավոր խուլ անկյունում ընկած-մոռացված գեղեցկությունների պատճառելիք հաճույքը։ Նախ այցելենք ջոջերից մեկին. քարուկրյաց մի ծածկույթ հովանավորել է նրան,—թեև այժմ երկու պատերն են միայն կանգուն. «սբ խաչս բարեխաւս առ քս մեծ և անուանի քաղաքապետի խաչքա Խաչիկին որ ի Ռ և Ծ.Գ. (1604) թուկնիս հանգաւ ի քս»։

Խաչքարը կազմված է չորս համաչափ խաչերից, միանման քանդակներով և համանման շրջանակների մեջ, որից վերև, հիշյալ երկու տող արձանագրության միջից՝ քանդակված է փրկիչը՝ աթոռի վրա բազմած՝ ծնկների ու ոտքերի մոտ ունենալով չորս ավետարանիչների խորհրդանկարները. փրկչի աջ ու ձախ կողմերը առանձին շրջանակների մեջ չոքած դիրքով քանդակված են վեց սուրբերի պատկերներ, լուսապսակով։ Իսկ խաչի ստորոտում ձախակողմը՝ խոջա Խաչիկի պատկերը, թուրով, բազմած ճոխապես զարդարված նժույգի

---

6 Հ. Ջուղայի գերեզմանատան մանավանդ գյուղատեղի քանդումն ու պեղումը նոր բան չէր, այլ սկսված է XVIII դարու սկզբից, Հ. Ջուղայեցվոց տեղահանումից անմիջապես հետո և շարունակվում է մինչև այսօր։ Բայց լսենք ժամանակակից պատմչին՝ «Իսկ ժողովուրդք ջուղայեցւոց ոչ կարացին զինչս և զստացւածս իւրեանց զամենայն բառնալ և տանել ընդ ինքեանս... այլ իւրաքանչիւր ոք պահելով թագուստ և դաղուստ արարեալ ի յարկս, և ի խորս, և ի վիհս, և ի պատշաճաւոր տեղիս, և այնպիսի թողեալ գնացին։ Իսկ շրջագայ գեղօրէից բնակիչք և գաւառականքն, որք մերձ էին Հին Ջուղայոց, գիտէին զպահուստն, զոր ջուղայեցիքն արարին. վասնորոյ զային նոքա յարաժամ և յուզէրն. որոնէին, և պեղէին կՀող և զքար յաղագս գիտելոյ ընչից և բազումք բազում ինչս գտանեին» (Պատմութիւն Առաքելի վարդապետի Դաւրիժեցւոյ, էջ 522)։

Պատմագրի հիշած XVIII դարու պեղումները կատարվում են մինչև այսօր։ Եվ ես իմ այնտեղ գտնված ժամանակ զորան ականատես եղա։ Մի քանի ջուղայեցի, գլխավորաբար ծերունիներ, մանավանդ կիրակի օրերը, երբ ոչ մի դաշտային աշխատանք չկա, փոքրիկ բրիչներ առած ընկնում են գյուղատեղը և անվերջ փորփրում։ Արդյունքը—խորին դաղտնիք է, ինձ մ այն ցույց տվին մի քանի խեցեղեն ամաններ։

վրա։ Պատկերի աջակողմը փորագրված է—«Խչս յշտկ խաչա խաչկին և կղկցն (կողակցին) Մարիամի...»։

Տիպար խաչքար՝ զուտ ջուղայական արվեստի, և կանգնեցրած համարյա տեղահանության նախօրյակին[7]։

Ահա ուրիշ նմուշներ. երկու ճոխապես քանդակված խաչքարեր, միմյանց մոտ, համարյա միաչափ։ Կազմողը ջանք չի խնայել, և իր ամբողջ շնորհքը գործադրել է այդ ջուղայական իսկատիպ օրինակների վրա իր արվեստի բոլոր նրբությունը ցուցաբերելու։ Աջակողմինը շատ հարուստ քանդակված շրջանակի մեջ ներկայացնում է մի մեծ խաչ, որի բունի զարդաքանդակներիո դուրս են ցցված երկու ձեռքեր և մեծ խաչի երկու կողմում բռնում են երկու ավելի փոքր խաչեր, խաչի պատվանդանի վրա քանդակված է անշուշտ Ադամի գլուխը, որի երկու կողմը մի տողի վրա փորագրված է. «կազմող Գրիգոր»։ Խաչի տակ գտնվող ավանդական սկավառակից ներքև ուռուցիկ տառերով (որ այս զույգ խաչքարերի առանձնահատկություններից մեկն է) քանդակված է. «Ամ է նշան տէրունական և բարեխաւս է փրկութե», մահդասի փաշամին հջն թ։ ՌԻԵ (1576)։ Այդ ուռուցիկ տառերով փորագրված երեք տողերից հետո փորագրված է տպագրական տառերի օրինակով[8]. «և հարազատ եղբրցն տր Աթանասին, բար... Ծնող»։

Խաչքարը շրջանակված է միօրինակ քանդակով, իսկ նրա գլխին, առանձին բունների մեջ զետեղված են կրկին չորս խաչեր։

Ջախակողմյան խաչքարը իր կենտրոնում ունի առանձին բունների մեջ զետեղված նուրբ քանդակված չորս համաչափ խաչեր, շրջանակված ճոխ ու բազմազան քանդակներով. ավանդական սկավառակի տակ պահարանաձև երկու բունների մեջ ուռուցիկ տառերով փորագրված է «սբ խչս բարեխաւս փրկութ... առ քս հանգուցեալ Գրիգորին հոգուն ի թվականիս։ ՌԻԹ» (1580)։ Քանդակազարդ շրջանակի գլխին առանձին բունների մեջ վեց փոքրիկ խաչեր կան։ Այս զույգ խաչքարերը ընտիր օրինակներ են Ջուղայի խաչքարերի և պետք է որ ուրույն վարպետների գործ լինեն։

Իսկ մի այլ շատ պարզ խաչքարը,—պարզ իր խաչով, պարզ իր քանդակներով, նույնիսկ կոպիտ իր պատկերով, հետաքրքիր է իր արձանագրությամբ. որ անմիջապես պատկերի վրա է։ Պատկերը ներկայացնում է մի շատ կոպտորեն քանդակված ձիավոր, ձեռքին փոքրիկ խաչ, որ սովորական է առհասարակ տեսնել Ջուղայի խաչքարերի վրա փորագրված ձիավորների ձեռքին[9].

---

7 Հին Ջուղայում, գյուղի ավերակների մեջ տեղացիք ավանդարար ցույց են տալիս խոջա խաչիկի տնատեղը։

8 Տպագրական տառերի օրինակով արձանագրությունները նույնպես Ջուղայի խաչքարերի առանձնահատկությունն է և առաջին անգամ երևում է նրանց վրա։

9 Ես մասնավոր հետաքրքրություն ունեցա թե ի՞նչ են նշանակում ձիավորների ձեռքին դրված խաչերը, որոնք բոլորովին այլ կազմություն ունեին, կարծեք կազմված են երկու միմյանց ագուցած հավասար օղակներից։ Ես կարծում էի, թե անշուշտ ջուղայեցիք իրենց մեռելները թաղում էին ձեռքին տված մի այդպիսի մոմից կազմված խաչ։ Մի Թիֆլիսեցի վրացի ինձ պատմեց, որ հնումը այդ սովորությունը եղել է վրացվոց մեջ։ Եվ քրիստոնեական հին գերեզմաններ բացված են, և միջից գտնված են մոմից կազմված խաչեր, նույն սովորությունը կա նաև Իմերեթի հայոց մեջ։ Թիֆլիսի հայերի մեջ ես մինչև օրս կա այդ սովորությունը. միայն մանկահասակ նեղեցյալների վերաբերմամբ։

ձիավորի ոտքերի տակ ընկած են երեք մարդիկ, մեջտեղինի վրա քանդակված է «մդսպանք են», իսկ պատկերի վրայի արձանագրությունն է «սր խաչս բարեխաւս առ քս վասն Դավիթին, որ խոցեցաւ այլազգաց ի Ղարաբաղին»։ Թվականը անհայտ։ Ահա մի շատ սրտաշարժ արձանագրություն, մի նմույշ հայ երկարատև մարտիրոսագրության։



Հին Ջուղա. խաչքար. ձախից՝ Ա. Վրույրը։

Ահա և մի այլը նման բովանդակությամբ. խաչքարը պարզ է իր կազմությամբ, այսինքն կենտրոնի մեծ խաչով ու շրջանակի քանդակներով, բայց ամբողջը կազմված է այնպես, որ հիշեցնում է հայկական ոճը, որից շեղվում է իր նկարով և արձանագրությամբ.

«Խաչս յշտկ է Մանուկին, և քաջազոր մեծ զինուորին։ Ինքն և իւր հայրն հեռուստ գային, անկան ի ձեռն (ձեռն) այլազգին, և նետաձիք արբ (արար) զնոքին. և յոյժ յղթց զիւր թշմին. (թշնամին) թվ. ՌԻԲ» (1573)։



Հին Ջուղա. գերեզմանատան մի մասը։



Հին Ջուղա. գերեզմանատան մի մասը։

Զինվորի[10] պատկերը փորագրված է արձանագրության ձախակողմյան վերի անկյունում քառակուսի շրջանակի մեջ, կանգնած դիրքով, հագուստը երևի պողպատյա օղակներից հյուսված այն զգեստն է, որ ընդունված էր այդ դարերում պարսկական և այլ արևելյան ազգերի զինվորներին հագնել, ձախ ձեռքով բռնած է սուրը, աջ ուսից կախ է աղեղը, կողքից՝ աջ ձեռքին բռնած է փոքր կացին։

Վերջացնեմ նրանով, որ ըստ ուսանող Գ. Աղամալյանի հաշվի, ընկած և կանգուն հուշարձանների ընդհանուր թիվն է 2100 (այս թիվը ստույգից տարբերվում է ոչ ավելի, քան 30—50 հատով)։

НЕОПУБЛИКОВАННЫЙ АРХЕОЛОГИЧЕСКИЙ ОЧЕРК АРАМА ВРУЙРА «ДЖУГА»

АРТАШЕС ВРУЙР

(Р е з ю м е)

Известный мастер армянского театра Арам Вруйр одновременно являлся замечательным специалистом по археологическому фотографированию. В 1916 г. он находился в составе экспедиции акад. Н. Я. Марра в Западную Армению. Помимо участия в раскопках Ани, Вруйр по поручению Марра, как археолог-фотограф, работал в Ахпате, Санаине, Талине, Хошаванке, Аргине, Старой Джуге и других местах. Публикуемый очерк написан им в 1915 г.

---

10 Պարսկական իշխանության տակ գտնվող այդ գավառում, որտեղի քրիստոնյայք աղատ էին զինվորագրությունից, զինվոր են հասկանում զինված այն մարդիկ, որոնք վաճառականներից վարձված՝ ուղեկցում էին նրանց կարավաններին։ Այլ կերպ զինվոր բառը անբացատրելի է։ Նույն մտքով է գործածում նաև պատմագիրը՝ «...այլ և տուաք գիշերապահ զինուորացն, որոց հասաս ասեն...» (Առաքյալ Դավրիժեցի, նույն տեղում, էջ 560)։